570, 390, 495

1. Մի՛ լինիր տրտում, եղբա՛յր սիրելի,
Ձգի՛ր վշտերդ, ուրախացի՛ր,
Կփոխվի կյանքը այս անցանելի,
Սիրում է մեզ Տերը, մի՛ մոռացիր:

2. Տիրոջն ընդունիր՝ վեմ ու կարեկից
Եվ աղոթքում դու հարատևիր,
Նա կամոքի քո սիրտը վշտերից
Եվ հոգուդ կասի՝ ուրախ եղիր:

3. Այստեղ ալիքներ շատ փոթորկահույզ
Աղմկում են, գոռում են ուժգին,
Բայց դու վեր նայի՛ր, մի՛ լինիր անհույս,
Հայացքդ միշտ ուղղիր քո Փրկչին:

4. Նրա ձեռքին է ղեկը մեր կյանքի,
Հանգչում ենք Նրա պաշտպանությամբ,
Ուղարկում է Նա ուզածն Իր կամքի,
Առաջնորդում մեզ ուրախության:

5. Մեզ սպասում է այնտեղ խաղաղ կյանք,
Չկա այնտեղ քամի ահարկու,
Այնտեղ չի մարում լույսը հավիտյան,
Քրիստոսն Ինքն է այնտեղ լույս տալիս:

6. Դժվար րոպեներ չահաբեկեն քեզ,
Ոչ խաչդ քեզ տրտունջ պատճառի,
Մեծ փորձություններ թե հանդիպեն քեզ,
Հուսա ողորմությանը Գառի:

7. Մի՛ մոռացիր, Քրիստոս քո Փրկիչն է,
Նա քեզ համար տանջվեց անվարան,
Թշվառությունից Նա ազատիչն է,
Նա քեզ հետ է ընդմիշտ, հավիտյան:

8. Մի՛ լինիր տրտում, եղբայր սիրելի,
Մի՛ վշտացիր, ցնծա՛ մեծապես,
Երկնքում տուն ունես դու հայրենի,
Երանյաց մեջ էլ հանգիստ կառնես: